

եթէ իցէր մասամբք կերպիւ ինչ իբրու սփոփանք, եւ էր սփոփանք, զի ոչ մնացի պարտական տուժելոյ անդրադարձիւն, զի այն էր ինձ կրկին տուգանք եւ վտանգ: Եւ այսու երիւքս հարկիս եւեթ զաղօթս խնդրեցից ի հաճոյիցդ Աստուծոյ շնորհել մեզ համբուրութիւն ի ցաւս, որպէս ի համագումար ժողովոյն մաղթեցի: Եւ զի ճառք պատճառին բազումք եղեն եւ կատարածն վախճան ողբերգանօք եւ ներբողինօք, թէ որքան իցէր նորայն ճոխութիւն՝ այնքան եւ նուաստութիւն, որքան իցէր բարձրութիւն՝ այնքան եւ անարգութիւն, եւ եւս զի՛նչ պատմութիւն քան թէ ընդ հողով ծածկիլ, ըստ վճռի Արարչին՝ մուտն եւ ելն բնութեանս մարդկայնոյ հասարակօրէն: Բայց աւա՛ղ էր տեսանելեացս՝ եւ այն յաւէտ աղէտիւ. ո՛հ որդեկորուսիս՝ եւ այն մինչեւ յելս շնչոյս տազնապաւ. ափսո՛ս որգեմեռ ծնողիս՝ եւ այն անշիջանելի հրով. վա՛յ հօրն այնպիսի որդւոյ ի ցաւ խտազին պաշարեալ շիւարմամբ՝ եւ այն անբժշկելի: Եւ զի՞նչ ասելի է՝ եթէ ոչ Յօբայ ձայնին հետեւիմ. Կարօտիմ գերեզմանի եւ ոչ հասանիմ, տառապի[մ] աշխատեալ, եւ զի՞նչ գործեցից, որպէս ի գերեզմա[նա]տանի բուզօքն իմ այսպէս հրատարակեցաւ: Սակայն Յօբն այն ըզձանաց իւրոց եհաս յոր յուսայրն յԱրարչէն՝ ասելով. Կարող ես զիս յարուցանել, որ ի վերայ այնքան փորձութեան մոռացեալ գլխտոյսն եւ նկրտեալ զառաջագէմն միսիթարութիւնսն կրկնապատիկ: Հասկանամ զնախամօրն նոր կսկիծ, որ ի վերայ Արիլի աւրար նախալալօնք եւ Աեթօքն բաւականեալ սփոփեցաւ: Լուեալ եմ զանձկութիւն Յակօբայ գուժի գայլապուռ որդւոյն, զի որքան կոծեցաւ վասն մահուան՝ այնքան եւ բերկրեցաւ ընդունիլ ողջամբ եւ սքանչելապէս թագաւորեալ ետես զնազելին Յովսէփ: Ծանօթացեալ եմ յեղակարծ մահուան գօհնին իլեայ որ